ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> Հոկտեմբեր 2021թ. ՆՄՈ/490-2021

Ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի ՆՄՈ/467-2021 որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 29.10.2021 17:29:41 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2021 թվականի հոկտեմբերի 29 -ի
ՆՄՈ/490-2021 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ՝ Գևորգ Գևորգյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Գասպար Հովհաննիսյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան՝ Լիաննա Հարությունյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Արթուր Պողոսյան.

Հանձնող՝
Մեծամոր համայնքապետարանի քարտուղար՝ Անահիտ Գրիգորյան.

Ընդունող՝
Մեծամոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Արմեն Հովսեփյան:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 29.10.2021 14:50:18 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023